ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

PH international
ADVANCING SOCIETIES. CONNECTING PEOPLE

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՓԻ-ԷՅՉ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք.Երևան «.....» հուլիսի, 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ մի կողմից, և Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված «Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղ՝ «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, ստորագրեցին սույն Համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

I. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը համաձայնեցին համագործակցել Տավուշում կրթական-տեղեկատվական միջոցառումների ծրագիրը և Անգլերենի դասընթացներ հայաստանցի ուսուցիչների և աշակերտների համար ծրագիրը (այսուհետ՝ Ծրագրեր) իրականացնելու նպատակով: Ծրագրերը նախատեսված են Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար: Ծրագրերի բովանդակությունը և իրականացման ձևաչափը Կազմակերպությունը ներկայացնում է Նախարարություն՝ հաստատման:

2. Ծրագրերի նկարագրությունները և իրականացման մեխանիզմները ներկայացված են սույն Հուշագրին կից Հավելված 1-ում և Հավելված 2-ում:

II. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. **Կազմակերպության գործողությունների շրջանակը.**
   1) Տավուշում կրթական-տեղեկատվական միջոցառումների ծրագրի մասով.

ա. ՀՀ Տավուշի մարզի 5 համայնքներից ընտրության միջոցով հավաքագրված 13-16 տարեկան ընդհանուր թվով 100 դպրոցական աշակերտների (20 դպրոցական յուրաքանչյուր համայնքից) համար անգլերենի անվճար ուսուցման արտադպրոցական «Աքսես» ծրագրի իրականացում:

2) Անգլերենի դասընթացներ հայ ուսուցիչների և աշակերտների համար ծրագրի մասով.

ա. ՀՀ տարբեր մարզերի 5 համայնքներից ընտրության միջոցով հավաքագրված 13-16 տարեկան ընդհանուր թվով 200 դպրոցական աշակերտների (20 դպրոցական յուրաքանչյուր համայնքից) համար անգլերենի անվճար ուսուցման արտադպրոցական «Աքսես» ծրագրի իրականացում:

բ. Հայաստանի Հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններից ընտրված անգլերենի 70 ուսուցիչների (20-ը որպես մենթոր, 50-ը որպես մենթի) համար անգլերենի դասավանդման ժամանակակից մեթոդների մասին դասընթացների և ուսումնական մենթորության գործընթացի կազմակերպում:

գ. Առցանց հարթակի ստեղծում, որը կծառայի որպես ծրագրի մասնակից ուսուցիչների կողմից ստեղծված՝ անգլերեն լեզվի արդյունավետ դասապլանների պատրաստման շտեմարան: Օժանդակություն շահառու ուսուցիչներին անգլերենի որակյալ դասապլանների մշակման աշխատանքներում և դասապլանների տեղադրում ծրագրային առցանց հարթակում՝ հանրային օգտագործման համար:

դ. Ծրագրերի իրականացման ընթացքի մասին պարբերական հաշվետվությունների և ըստ պահանջի այլ տեղեկությունների ներկայացում Նախարարությանը:

4. Նախարարության գործողությունների շրջանակը Ծրագրերի մասով.

1) Նախարարության աշխատակազմից նշանակել պատասխանատու անձ՝ Կազմակերպության ներկայացուցչի հետ ընթացիկ հաղորդակցությունը արդյունավետորեն կազմակերպելու և Նախարարության ղեկավարության հետ սույն Հուշագրի շրջանակում նախատեսված գործողություններին անչվող հարցերն ու համապատասխան գործընթացները համաձայնեցնելու համար:
2) Կազմակերպության հետ միասին մասնակցել Ծրագրերի մշտադիտարկման մարզային այցերին կամ պլանավորված հանդիպումներին:
3) ՀՀ հանրակրթական դպրոցներին փոխանցել Կազմակերպությունից ստացած՝ անգլերեն լեզվի ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստման միջոցառումներին և մենթորության գործընթացներին դիմելու մրցութային հայտարարությունները:
4) Մասնակցել անգլերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին և մենթորության գործընթացներին դիմած թեկնածուների ընտրությանը,

կարող է նաև մասնակցել դասալսումներին և ուսուցիչների ու մենթորների միջև ընթացող ուսումնական աշխատանքներին:

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
6. Սույն Հուշագիրն արտացոլում է Կողմերի մտադրությունները և նրանց համար չի առաջացնում իրավական պարտավորություններ:
7. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և հանդիսանում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:
8. Սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման մասով ծագող բոլոր տարաձայնությունները և վեճերը կկարգավորվեն Կողմերի միջև բանակցությունների և (կամ) խորհրդատվությունների միջոցով:
9. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Հուշագիրը՝ առնվազն 1 (մեկ) ամիս առաջ գրավոր ծանուցելով մյուս Կողմին այդ մտադրության մասին:
10. Սույն Հուշագիրը կազմված է 2 (երկու) հավասարազոր բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն:
11. Կողմերը՝ ի դեմս իրենց լիազոր ներկայացուցիչների, ստորագրեցին սույն Հուշագիրը վերոնշյալ ամսաթվին:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝	«Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղի կողմից
Ժաննա Անդրեասյան	Մարիամ Մարտիրոսյան
Նախարարի տեղակալ	Տնօրեն

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ՏԱՎՈՒՇՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ» ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի իրականացման ժամկետ. մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը

Ծրագրի նպատակ. Անգլերեն լեզվի դասընթացների, տարբեր թեմատիկ ու մասնագիտական դասընթացների, ինչպես նաև մշակութային, տեղեկատվական միջոցառումների միջոցով Տավուշի մոտ 3600 բնակիչների փոխանցել նոր գիտելիքներ, հմտություններ, արժեքներ և մոտեցումներ՝ աջակցելով նրանց դառնալ ավելի մրցունակ ու ինքնավստահ մասնագետներ իրենց կրթական և մասնագիական կյանքում, ինչպես նաև ավելի իրազեկ, ինքնավստահ ու ակտիվ քաղաքացիներ իրենց հանրային կյանքում:

Ծրագրի հիմնական բաղադրիչներ և շահառուներ. Ծրագիրը բաղկացած է ստորև նշված 2 բաղադրիչներից, որոնց աշխատանքներում ներգրավվելու են **Տավուշի մոտ 3600 բնակիչների 2 հիմնական հետևյալ խմբերը**.

1. Անգլերեն լեզվի անվճար դասընթացների Աքսես ծրագրի (English Access Microscholarship Program) շահառուներ՝ 13-16 տարեկան Տավուշցի **100 դպրոցականներ** (մարզի 5 համայնքների հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ, 20-ական յուրաքանչյուր համայնքից),
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հարկի ներքո հիմնված «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի գրադարանային ծառայությունների և դասընթացների շահառուներ՝ **Տավուշի տարբեր համայնքների 18 և ավելի բարձր տարիք ունեցող շուրջ 3500 բնակիչներ:**

ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

Ստորև մանրամասն կերպով ներկայացված են ծրագրի յուրաքանչուր բաղադրիչի շրջանակում ակնկալվող գործողությունները, իրականացման եղանակներն ու ակնկալվող արդյունքները:

ԲԱՂԱԴՐԻՉ 1՝ Անգլերեն լեզվի դասընթացների Աքսես ծրագրի կազմակերպում 13-16 տարեկան Տավուշցի 100 դպրոցականների համար

«English Access Microscholarship Program (Access)»

Աքսես ծրագրի տևողությունը և բաղկացուցիչները

Անգլերեն լեզվի անվճար, խորացված դասընթացը մասնակից դպրոցականների յուրաքանչյուր 20 հոգանոց խմբի համար տևում է 2 տարի՝ ներառյալ ամառային ամիսները, և կազմված է հետևյալ 4 բաղկացուցիչ մասերից.

1. Դպրոցի հիմնական դասերից հետո 360 ժամ անգլերեն լեզվի խորացված, անվճար ուսուցում, որի արդյունքում անգլերեն չիմացող կամ սկսնակ մակարդակով անգլերենին տիրապետող դպրոցականները տիրապետում են միջին մակարդակի (intermediate) խոսակցական անգլերենի հմտությունների,
2. Դպրոցի դասերից հետո ինտերնետ-համակարգչային 20 ժամանոց բազային դասընթաց,
3. Ամառային արձակուրդների ժամանակ համայնքային և միջմարզային ընդհանուր ճամբարներ,
4. Անգլերենի դասերին զուգահեռ, մասնակիցների անհատական զարգացմանը նպաստող, մշակութային, սպորտային և սոցիալական տարբեր միջոցառումներ (ընդամենը՝ 70 ժամ):

Մասնակիցների ընտրության կարգը

Ծրագրի համայնքների ընտրությունից հետո մրցույթի միջոցով կազմակերպվում է մասնակիցների ընտրությունը, որը կատարվում է երկու փուլով.

Ի ՓՈՒԼ

Ստորև նշված պահանջներին համապատասխանող դպրոցականները լրացնում են գրավոր հայտ, որի մեջ, պատասխանելով որոշ հարցերի, հիմնավորում են ծրագրում իրենց մասնակցության մոտիվացիան (Ի՞նչ մասնագիտություն են ընտրելու, ինչպե՞ս օտար լեզվի իմացությունը կնպաստի իրենց հետագա անձնական, ուսումնական և մասնագիտական աճին, ի՞նչ արտադպրոցական ծրագրերի են մասնակցել մինչ այժմ, համայնքային ի՞նչ ծրագրեր կցանկանային իրականացնել համապատասխան ռեսուրսներ ունենալու պարագայում և այլն):

Ծրագրի դիմորդներին առաջադրվում են մի շարք պահանջներ: Դիմորդը պետք է.

- ծրագրի ամբողջ ընթացքում իր քաղաքում ապրելու մտադրություն ունենա, պետք է երկարատև չբացակայի իր քաղաքից, որպեսզի կարողանա պարտաճանաչ կերպով մասնակցել ծրագրի բոլոր դասընթացներին և միջոցառումներին,
- դիմելու պահին լինի 13-15 տարեկան,
- ունենա բարձր ուսումնական առաջադիմություն,
- խիստ կարևորի անգլերենի գերազանց իմացությունն իր բարձրագույն կրթության և մասնագիտական զարգացման համար,
- ունենա այլ ծրագրերի և նախաձեռնությունների մասնակցության փորձ,
- ցուցաբերած լինի սոցիալական ակտիվություն և հետաքրքրվածություն դպրոցի ու համայնքի խնդիրները լուծելու հարցում,
- լինի ակտիվ, ստեղծագործ, նորարար, ինքնուրույն և նախաձեռնող անձնավորություն,
- ունենա թիմում աշխատելու և մյուս մասնակիցների հետ արդյունավետորեն հաղորդակցվելու հմտություններ:

Նախընտրելի է, որ դիմելու պահին դիմորդն ունենա անգլերենի բազային իմացություն, սակայն անգլերենի իմացությունը պարտադիր պայման չէ: Շահառու աշակերտների մի մասն իրենց դպրոցներում որպես օտար լեզու անգլերեն չի սովորել, և այս ծրագիրը նրանց հնարավորություն է ընձեռում անգլերեն սովորել:

II ՓՈՒԼ

Բարձր գնահատված հայտեր ներկայացրած թեկնածուների հետ անց է կացվում հարցազրույց: Երկրորդ փուլը հաղթահարած բոլոր մասնակիցները գրում են անգլերենի իմացության թեստ, որի արդյունքները ևս հաշվի են առնվում վերջնական որոշում կայացնելու համար: Քանի որ ծրագրում հաճախ են ընդգրկվում մինչ այդ դպրոցում որպես օտար լեզու միայն գերմաներեն կամ ֆրանսերեն սովորած դպրոցականներ, ապա թեստի արդյունքները ավելի հաճախ դիտարկվում են ոչ թե որպես քննական փուլի արդյունքներ, այլ կողմնորոշիչ դեր են ունենում նախկին երկու փուլերում հավասար կամ շատ մոտ բալեր հավաքած երեխաների ընտրության գործում:

Ի լրումն ընթացիկ գնահատումների, անգլերենի իմացության իրենց առաջընթացը գնահատելու նպատակով, ծրագրի վերջում մասնակիցները մեկ անգամ ևս հանձնում են նույն թեստը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ծրագրի դասերը կազմակերպվում են ծրագրի գործընկեր ավագ դպրոցներում՝ շաբաթական 2-3 անգամ, դպրոցի դասերից հետո: Յուրաքանչյուր խումբ իր ուսուցչի հետ որոշում է իր դասերի օրերը և տևողությունը՝ բավարարելով տարեկան 360 ժամը լրացնելու պայմանը: Ծրագրի դասընթացների և բոլոր միջոցառումների կազմակերպման ընթացում կիրառվում են ինտերակտիվ, ներառական, աշակերտակենտրոն, համագործակցային ուսուցման մեթոդներ:

Ուսուցումը հագեցած և առավել հետաքրքիր կազմակերպելու նպատակով դասընթացները վարող ուսուցիչները օգտագործում են նաև բազմաթիվ առցանց ռեսուրսներ, ինչպիսիք են առցանց թեստերը, ուսուցողական վիդեո-աուդիոնյութերը, տարբեր տեխնիկական ծրագրերով պատրաստված տեղեկատվական շնորհանդեսները, ուսումնական բլոգները, ֆորումները և այլն:

Ա/ Անգլերենի դասերի համար օգտագործվող գրականություն

Դասընթացներն անցկացվում են անգլերենի ուսուցման համար միջազգային լայն տարածում ունեցող տարբեր գրքերի և ռեսուրսների համակցմամբ, սակայն հիմնական օգտագործվող դասագրքերը ներկայացված են ստորև.

- "Destination" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "Interchange" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "Headway" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "New English File" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "English Grammar in Practice" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով):

Ի լրումն դասերի ժամանակ օգտագործվող այս դասագրքերի, երեխաներին նաև տրամադրվում է գրականություն՝ տնային ընթերցանության համար: Այդ գրքերի ցանկն

անընդհատ փոփոխվում և թարմացվում է, սակայն որոշ դասական հեղինակների գրքեր սովորաբար ներառվում են ամեն տարի մասնակիցներին տրամադրվող գրքերի շարքում, օր.

#	Հեղինակ	Գրքի վերնագիր
1	O. Henry	The Last Leaf and Other Stories
2	Herman Melville	Billy Budd
3	Henry James	Washington Square
4	W. Somerset Maugham	The Escape and Other Stories
5	F. Scott Fitzgerald	The Cut-Glass Bowl and Other Stories
6	W. Somerset Maugham	The Creative Impulse and Other Stories
7	Herman Melville	Moby Dick
8	Thomas Hardy	The Woodlanders
9	D.H. Lawrence and others	British and American short stories
10	Wilkie Collins	The Woman in White
11	Maya Angelou	I Know Why the Caged Bird Sings
12	Emily Bronte	Wuthering Heights
13	Jane Austen	Sense and Sensibility
14	Jane Austen	Emma
15	Jack London	The Call of the Wild
17	John Steinbeck	The Pearl

Բ/ Մասնակիցների անձնային զարգացմանն ուղղված միջոցառումների հակիրճ նկարագրություն

Ի լրումն անգլերենի դասերի, մասնակիցների համար կազմակերպվում են նաև նրանց անձնային աճին նպաստող տարբեր ենթածրագրեր և միջոցառումներ, օրինակ՝

1. Բազային ինտերնետ-համակարգչային հմտությունների ուսուցանում՝ 20 ժամ ծրագրի սկզբում,
2. Հանդիպումներ և քննարկումներ տարբեր ոլորտների մասնագետների և վերապատրաստողների հետ: Քննարկումների և վերապատրաստումների թեմաները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով. երեխաների իրավունքներ և պարտականություններ, ծանոթություն առաջնորդության տարբեր տեսությունների, բանավեճի հմտություններ, արդյունավետ հաղորդակցման հմտություններ, շրջակա

միջավայրի պաշտպանություն, հետաքրքիր տեղեկությունների այլ մշակույթների մասին և այլն,

3. Ամառային ճամբարներ, որոնք տևում են մինչև 4 օր: Դրանցից մի քանի օրը կազմակերպվում են հենց շահառու համայնքներում, մի քանի օր էլ միասնական որևէ վայրում (օր. նախորդ տարիներին կազմակերպվել են Աղվերանում կամ Ծաղկաձորում): Ճամբարների ընթացքում կազմակերպվող հետևյալ բնույթի տարատեսակ միջոցառումների ժամանակ մասնակիցները.
   - Ծանոթանում են Web 2.0 տարբեր ռեսուրսների, որոնց կարող են անվճար հիմունքներով անդամագրվել և մասնակցել անգլերեն լեզվով տարբեր ուսումնական կամ անձնական աճին նպաստող վեբինարների ու առցանց դասընթացների,
   - Հանդիպում և զրուցում են իրենց ոլորտում հաջողության հասած տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների հետ, այցելում են տարբեր կրթական հաստատություններ (օր. Դիլիջանի UWC քոլեջ, Հայաստանի Ամերիկյան համալսարան, Թումո ՏՀՏ կենտրոն), որն օգնում է նրանց կողմնորոշվել իրենց մասնագիտության ընտրության հարցում,
   - Հանդիպում են տարբեր միջազգային ծրագրերի շրջանավարտների հետ և նրանցից ստանում են խորհրդատվություն այդ ծրագրերին դիմելու պահանջների և համապատասխան քննություններին ճիշտ պատրաստվելու մասին,
   - Թիմային փոքրիկ հետազոտություններ են անցկացնում հանձնարարված կամ իրենց կողմից ընտրված տարբեր թեմաներով (օր., տարբեր երկրների կրթական կամ ընտրական համակարգերի մասին, աշխարհին հուզող բնապահպանական հարցերի մասին, հայտնի մարդկանց հետ կապված հետաքրքիր դեպքերի մասին և այլն),
   - Սովորում են, թե ինչպես գրել և իրականացնել դրամաշնորհային ծրագրեր,
   - Ծանոթանում են Հայաստանում ապրող ու աշխատող անգլախոս հյուրերի հետ և նրանցից հետաքրքիր տեղեկություններ են ստանում իրենց երկրների պատմության, մշակույթի, ավանդույթների մասին,
   - Մասնակցում են հռետորական արվեստի և արդյունավետ բանավեճի վերաբերյալ դասախոսությունների,
   - Մասնակցում են տարբեր գրական, երաժշտական և սպորտային խաղերի:

ԲԱՂԱԴՐԻՉ 2՝ Տավուշի մարզի «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ի կրթական-մշակութային գործունեության կազմակերպում

2020 թվականի փետրվարի 20-ին «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից ԵՊՀ հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի հարկի ներքո հիմնել է «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»:

ԱՄՆ կառավարության նախաձեռնությամբ և հովանավորությամբ մինչ այժմ ՀՀ-ում ստեղծվել և ներկայումս արդյունավետորեն գործում են 5 «Ամերիկյան կենտրոն»-ներ՝ Երևանում, Վանաձորում, Գյումրիում, Կապանում և Չարենցավանում, որոնք տեղակայված են տվյալ համայնքի քաղաքային գրադարանում, որևէ դպրոցում կամ այլ կրթամշակութային օջախում:

Տավուշի մարզի «Ամերիկյան գրադարանի և դասընթացների կենտրոն»-ի նպատակն է մարզի՝ մասնավորապես Իջևան քաղաքի և հարակից գյուղերի բնակիչների համար կազմակերպել

կրթական, մշակութային և տեղեկատվական միջոցառումներ, տարբեր թեմաների շուրջ ուսումնական կարճատև ծրագրեր և անգլերեն լեզվի անվճար դասընթացներ, որոնց շնորհիվ կզարգանան մասնակիցների սոցիալական և տեխնիկական հմտությունները, ինչպես նաև տեղի բնակչությունը կծանոթանա ամերիկյան արժեքներին, պատմությանը և մշակույթին:

Կենտրոնը համալրված է հարմարավետ գույքով, նորագույն տեխնիկայով, արագ ինտերնետ կապով, անգլերեն և հայերեն լեզուներով հարուստ գրականությամբ՝ կենտրոնի ռեսուրսներից և ծառայություններից օգտվողների համար ապահովելով գրավիչ ուսումնական միջավայր և միջմշակութային շփման հետաքրքիր հնարավորություններ:

«Ամերիկյան գրադարանի և դասընթացների կենտրոն»-ը բաց է ընդհանուր հանրության համար, գործում է երկուշաբթի-շաբաթ օրերին՝ ժամը 10:00-18:00: Կենտրոնում կազմակերպվող միջոցառումների, ինչպես նաև տարբեր գործընկերների կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստումների, կրթական ծրագրերի, մշակութային միջոցառումների մասին մշտապես հետաքրքիր նորություններ են տեղադրվում նաև Ֆեյսբուք սոցիալական ցանցում գործող կենտրոնի էջում:

Կենտրոնում Տավուշի բնակիչների համար կազմակեպվել են բազմաթիվ թեմաներով անվճար առցանց և առերես դասընթացներ, քննարկումներ, տարբեր միջոցառումներ: **Ստորև ներկայացված է 2021 թ. հուլիսի 1 – 2022 թ. սեպտեմբերի 30 ժամանակահատվածի միջոցառումների գրաֆիկը, իսկ 2021 թ. հոկտեմբեր-2022 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի միջոցառումները ԱՄՆ դեսպանատան և ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ խորհրդակցելով որոշվելու են 2021 թ. ամռանը:**

2021թ. ՀՈՒԼԻՍ-2022թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՖԻԿ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼՍԱՐԱՆ
Անգլերեն լեզվի դասընթացներ	Անգլերեն չիմացող կամ սկսնակ մակարդակի մասնակիցները դասընթացի ավարտին կտիրապետեն միջին մակարդակի խոսակցական անգլերենի	Նախատեսված է զուգահեռ 3 խմբերի համար՝ յուրաքանչյուր խմբում 20 մասնակցի ներգրավմամբ
Կրթական գործընթացներում ՏՀՏ-ների կիրառման հմտությունների ձևավորմանն ուղղված դասընթաց	2-օրյա դասընթաց, կազմերպվելու է 2 անգամ	Նախատեսված է Իջևան քաղաքի և հարակից գյուղերի ուսուցիչների 2 խմբերի համար՝ յուրաքանչյուր խմբում 20 մասնակցի ներգրավմամբ **(պայմանականորեն 2021 թ. հուլիս-օգոստոս ամիսներին)**
Ռազմավարական պլանավորման դասընթաց	2-օրյա դասընթաց, անցկացվելու է 1 անգամ	Նախատեսված է 20 հոգանոց 1 խմբի համար **(պայմանականորեն 2021 թ.**

		հուլիս ամսին)
Ծրագրերի մշտադիտարկման և գնահատման մեթոդների դասընթաց	2-օրյա դասընթաց, անցկացվելու է 1 անգամ	Նախատեսված է 20 հոգանոց 1 խմբի համար **(2021 թ. հուլիս ամսին)**
Բանակցության հմտությունների դասընթաց	2-օրյա դասընթաց, անցկացվելու է 1 անգամ	Նախատեսված է 20 հոգանոց 1 խմբի համար **(պայմանականորեն 2021 թ. հուլիս-օգոստոս ամիսներին)**
Կինոդիտումներ և քննարկումներ	Մինչև 2.5 ժամանոց միջոցառումներ	Ամսական մի քանի անգամ, սովորաբար ուրբաթ կամ շաբաթ օրերին
Առերես և առցանց դասախոսություններ և քննարկումներ՝ հրավիրված հյուր խոսնակների կողմից	1-2 ժամանոց միջոցառումներ	Ամսական մի քանի անգամ
Ամերիկյան և անգլիական գրականության ընթերցանության ակումբ	1-2 ժամանոց քննարկումներ ակումբի անդամների մասնակցությամբ տվյալ ամսվա համար ընտրված գրքի շուրջ	Նախատեսվում է 20-25 մասնակցի համար, ամսական 1 հանդիպում
Գրադարանային ծառայություններ	Գրքեր, ամսաթերթեր, անգլերենի ինքնուսուցման համար նախատեսված ռեսուրսներ՝ նախատեսված լայն հանրության օգտագործման համար	Ամենօրյա

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի իրականացման ժամկետ. մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը

Ծրագրի իրականացման համար սահմանված 2 շրջաններ՝

- Ծրագրային 1-ին շրջան՝ 2021 թ.
- Ծրագրային 2-րդ շրջան՝ 2022-2023 թթ. **Ծրագրի նպատակ**. Զարգացնել անգլերեն լեզվի 70 հայաստանցի ուսուցիչների անգլերենի դասավանդման և մենթորության կարողությունները, ինչպես նաև զարգացնել ՀՀ մարզերի 5 համայնքների սոցիալապես խոցելի ընտանիքներից 200 երեխաների անգլերեն լեզվի իմացությունը և սոցիալական հմտությունները:

Ծրագրի հիմնական բաղադրիչներ և շահառուներ. Ծրագիրը բաղկացած է ստորև նշված 2 բաղադրիչներից, որոնց աշխատանքներում ներգրավվելու են 270 հայաստանցի ուսուցիչների և աշակերտներ.

- **Բաղադրիչ 1** - Անգլերեն լեզվի հայաստանցի 70 ուսուցիչների՝ անգլերենի դասավանդման կարողությունների, որոնցից 20 ուսուցիչների նաև մենթորության կարողությունների զարգացման միջոցառումների կազմակերպում, և
- **Բաղադրիչ 2** - Անգլերեն լեզվի անվճար Access դասընթացի կազմակերպում, որի շահառուները 13-16 տարեկան 200 դպրոցականներ են (ՀՀ մի քանի մարզերի 5 համայնքների հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ, 20-ական յուրաքանչյուր համայնքից):

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստորև մանրամասն ներկայացված են ծրագրի երկու բաղադրիչների նպատակներին հասնելու համար սահմանված գործողությունները և դրանց իրագործման եղանակները:

ԲԱՂԱԴՐԻՉ 1՝ Անգլերեն լեզվի հայաստանցի 70 ուսուցիչների կարողությունների զարգացման միջոցառումների կազմակերպում

Այս բաղադրիչի շրջանակում ամբողջ Հայաստանից ընտրված անգլերենի 70 ուսուցիչների հետ կազմակերպվելու է անգլերենի դասավանդմանն առնչվող տարբեր թեմաների շուրջ վերապատրաստումների, ինչպես նաև աջակցող միջոցառումների և գործնական աշխատանքների շարք: Բաղադրիչի իրականացման 4 տարիների ընթացքում շահառու 70 ուսուցիչներից 20-ը վերապատրաստվելու են որպես մենթորներ, 60 հոգին (որից 10-ը ծրագրի 1-ին փուլում լինելու են մենթոր) էլ մասնակցելու են վերապատրաստման դասընթացների և կատարելագործելու անգլերենի դասավանդման իրենց գիտելիքներն ու կարողությունները:

2021 թ. հուլիս - 2023թ. սեպտեմբեր ժամանակահատվածում սույն բաղադրիչի շրջանակում իրականացվելու են ստորև նկարագրված գործողությունները.

- **Մենթորների ընտրություն**

Այս փուլում ծրագրի առաջին շրջանի 40 մենթի ուսուցիչներից կընտրվեն 10 ամենաակտիվ և խոստումնալից մասնակիցները, որոնց «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպությունը կառաջարկի շարունակել իրենց մասնակցությունն «Անգլերենի դասընթացներ հայաստանցի ուսուցիչների և աշակերտների համար» ծրագրում՝ որպես մենթորների 2-րդ սերունդ՝ ապահովելով վերջիններիս լրացուցիչ վերապատրաստումը և վարձատրությունը մենթորական աշխատանքների համար:

- **Մենթի ուսուցիչների ընտրություն և վերապատրաստում**

Մրցույթի միջոցով կընտրվեն 20 նոր անգլերենի ուսուցիչներ, որոնք կմասնակցեն ՏՀՏ-ների արդյունավետ կիրառմամբ անգլերենի դասավանդմանն ուղղված դասընթացի: Դասընթացը կվարեն մենթորները՝ ՏՀՏ ոլորտի և անգելերեն լեզվի առաջատար մասնագետների ղեկավարությամբ:

Դասընթացի վերջին օրը, 10 նոր մենթորներից յուրաքանչյուրին կկցվի 3 ուսուցիչ::

- **Մենթորության գործընթացի կազմակերպում**

Հնգօրյա դասընթացից հետո, 2022-23թթ. ուսումնական տարվա ողջ ընթացքում կկազմակերպվի մենթորության գործընթացը:

Դասընթացից հետո, մենթորների և մենթիների զույգերի, ինչպես նաև մենթիների դպրոցների տնօրենների հետ ինտենսիվ հաղորդակցության արդյունքում կմշակվի դասալսումների նախնական ժամանակացույց, որը կհանձնվի «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության վերջնական հաստատմանը: Հիմնվելով հաստատված ժամանակացույցի վրա, 10 մենթոր ուսուցիչները կսկսեն աշխատել իրենց 30 մենթիների հետ, փորձելով զարգացնել նրանց՝ որպես օտար լեզու անգլերենի դասավանդման հմտությունները՝ կանոնավոր առցանց և առերես դասալսումների և այցելությունների միջոցով, որից հետո ուսուցիչներին կտրամադրվեն խորհուրդներ, դասավանդման կարողությունների բարելավմանն ուղղված առաջարկներ և տեղեկություններ անգլերենի դասավանդմանն առնչվող տարբեր անվճար ռեսուրսների վերաբերյալ:

Ի լրումն կանոնավոր դասալսումների, յուրաքանչյուր ամիս բոլոր մենթորները նաև կկազմակերպեն առցանց խմբային խորհրդատվություն-վերապատրաստում իրենց կցված 4 մենթիների հետ՝ անգլերենի դասավանդմանն առնվող, նրանց հետաքրքրող կրթական թեմաներով:

Մենթի ուսուցիչներն իրենց մենթորների աջակցությամբ նաև իրենց դպրոցներում կկազմակերպեն աշխատաժողովներ՝ ներգրավելով իրենց համայնքի դպրոցների ուսուցիչների՝ վերջիններիս իրենց ձեռք բերած նոր գիտելիքները և հմտություններըներկայացնելու և փոխանցելու նպատակով:

- **Ծրագրային առցանց հարթակի ստեղծում և հագեցում անգլերեն լեզվի դասապլաններով**

Ստեղծվելու է ծրագրային առցանց հարթակ, որտեղ հանրային օգտագործման համար տեղադրվելու են ծրագրի շահառու ուսուցիչների կողմից ծրագրի ընթացքում մշակված անգլերենի լավագույն դասապլանները:

ԲԱՂԱԴՐԻՉ 2՝ English Access Microscholarship Program (Access)

Անգլերեն լեզվի անվճար, երկամյա խորացված դասընթացի կազմակերպում 13-16 տարեկան հայաստանցի 200 դպրոցականների համար

Դասընթացի տևողություն և բաղկացուցիչներ

Անգլերենի անվճար դասընթացը դպրոցականների յուրաքանչյուր 20 հոգանոց խմբի համար տևում է 2 տարի՝ ներառյալ ամառային ամիսները, և կազմված է հետևյալ 4 մասերից.

1. Անգլերեն լեզվի 360 ժամանոց, երկամյա, անվճար դասընթաց՝ դպրոցի հիմնական դասերից հետո, որի արդյունքում անգլերեն չիմացող կամ սկսնակ մակարդակով անգլերենին տիրապետող դպրոցականները տիրապետում են միջին մակարդակի (intermediate level) խոսակցական անգլերենի հմտությունների,
2. Դպրոցի դասերից հետո ինտերնետ-համակարգչային 20 ժամանոց բազային դասընթաց,
3. Ամառային արձակուրդների ժամանակ համայնքային ճամբարներ 20 հոգանոց խմբերի, ինչպես նաև միջմարզային համատեղ ճամբարներ,
4. Մասնակիցների անհատական զարգացմանը նպաստող, մշակութային, սպորտային և սոցիալական տարբեր միջոցառումներ (ընդամենը՝ 70 ժամ):

Ծրագրի իրականացման համար «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ»-ի կողմից ընտրված ՀՀ մարզային համայնքներում գործընկեր դպրոցների հետ կնքվում են Համագործակցության հուշագրեր, ինչպես նաև այդ համայնքում անգլերենի դասընթացը վարելու համար ընտրված ուսուցիչների հետ ծառայության մատուցման պայմանագրեր:

Հաջորդիվ, շահառու համայնքներից ընտրության միջոցով հավաքագրվում են **13-16 տարեկան ընդհանուր թվով 200 դպրոցականներ** (ծրագրի յուրաքանչյուր շրջանում 100-ական աշակերտ՝ 20 դպրոցական ամեն համայնքից), որոնք ներգրավվում են անգլերենի անվճար արտադպրոցական դասընթացի ծրագրում:

(1) **2021 թ. օգոստոս ժամանակահատվածի դասընթացների համար** 100 դպրոցականներ **ընտրվել են** ՀՀ Արարատի մարզի Վանաշեն գյուղի, Սուրենավան գյուղի, Վայոց Ձորի մարզի Արփի գյուղի և Եղեգնաձոր քաղաքի, Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղից:

(2) **2021 թ. սեպտեմբեր - 2023 թ. օգոստոս ժամանակահատվածի համար պետք է ընտրվեն** 100 այլ դպրոցականներ՝ 5 վերոնշյալ համայնքներից կամ այլ նոր համայնքներից:

Մասնակից դպրոցականների ընտրության կարգը

Ծրագրի համայնքների ընտրությունից հետո մրցույթի միջոցով կազմակերպվում է մասնակիցների ընտրությունը, որը կատարվում է երկու փուլով.

I ՓՈՒԼ

Ստորև նշված պահանջներին համապատասխանող դպրոցականները լրացնում են գրավոր հայտ, որի մեջ, պատասխանելով որոշ հարցերի, հիմնավորում են ծրագրում իրենց մասնակցության մոտիվացիան (Ի՞նչ մասնագիտություն են ընտրելու, ինչպե՞ս օտար լեզվի իմացությունը կնպաստի իրենց հետագա անձնական, ուսումնական և մասնագիտական աճին, ի՞նչ արտադպրոցական ծրագրերի են մասնակցել մինչ այժմ, համայնքային ի՞նչ ծրագրեր կցանկանային իրականացնել համապատասխան ռեսուրսներ ունենալու պարագայում և այլն):

Ծրագրի դիմորդներին առաջադրվում են մի շարք պահանջներ: Դիմորդը պետք է.

- ծրագրի ամբողջ ընթացքում իր քաղաքում ապրելու մտադրություն ունենա, պետք է երկարատև չբացակայի իր քաղաքից, որպեսզի կարողանա պարտաճանաչ կերպով մասնակցել ծրագրի բոլոր դասընթացներին և միջոցառումներին,
- դիմելու պահին լինի 13-15 տարեկան,
- ունենա բարձր ուսումնական առաջադիմություն,
- խիստ կարևորի անգլերենի գերազանց իմացությունն իր բարձրագույն կրթության և մասնագիտական զարգացման համար,
- ունենա այլ ծրագրերի և նախաձեռնությունների մասնակցության փորձ,
- ցուցաբերած լինի սոցիալական ակտիվություն և հետաքրքրվածություն դպրոցի ու համայնքի խնդիրները լուծելու հարցում,
- լինի ակտիվ, ստեղծագործ, նորարար, ինքնուրույն և նախաձեռնող անձնավորություն,
- ունենա թիմում աշխատելու և մյուս մասնակիցների հետ արդյունավետորեն հաղորդակցվելու հմտություններ:

Նախընտրելի է, որ դիմելու պահին դիմորդն ունենա անգլերենի բազային իմացություն, սակայն անգլերենի իմացությունը պարտադիր պայման չէ: Շահառու աշակերտների մի մասն իրենց դպրոցներում որպես օտար լեզու անգլերեն չի սովորել, և այս ծրագիրը նրանց հնարավորություն է ընձեռում անգլերեն սովորել:

II ՓՈՒԼ

Բարձր գնահատված հայտեր ներկայացրած թեկնածուների հետ անց է կացվում հարցազրույց: Երկրորդ փուլը հաղթահարած բոլոր մասնակիցները գրում են անգլերենի իմացության թեստ, որի արդյունքները ևս հաշվի են առնվում վերջնական որոշում կայացնելու համար: Քանի որ ծրագրում հաճախ են ընդգրկվում մինչ այդ դպրոցում որպես օտար լեզու միայն գերմաներեն կամ ֆրանսերեն սովորած դպրոցականներ, ապա թեստի արդյունքները ավելի հաճախ դիտարկվում են ոչ թե որպես քննական փուլի արդյունքներ, այլ կողմնորոշիչ դեր են ունենում նախկին երկու փուլերում հավասար կամ շատ մոտ բալեր հավաքած երեխաների ընտրության գործում:

Ի լրումն ընթացիկ գնահատումների, մասնակիցները ծրագրի վերջում անգլերենի իմացության իրենց ամբողջական առաջընթացը գնահատելու նպատակով մեկ անգամ ևս հանձնում են նույն թեստը:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Ծրագրի դասերը կազմակերպվում են ծրագրի գործընկեր ավագ դպրոցներում՝ շաբաթական 2-3 անգամ, դպրոցի դասերից հետո: Յուրաքանչյուր խումբ իր ուսուցչի հետ որոշում է իր դասերի օրերը և տևողությունը՝ բավարարելով տարեկան 360 ժամը լրացնելու պայմանը: Ծրագրի դասընթացների և բոլոր միջոցառումների կազմակերպման ընթացում կիրառվում են ինտերակտիվ, ներառական, աշակերտակենտրոն, համագործակցային ուսուցման մեթոդներ:

Ուսուցումը հագեցած և առավել հետաքրքիր կազմակերպելու նպատակով դասընթացները վարող ուսուցիչները օգտագործում են նաև բազմաթիվ առցանց ռեսուրսներ, ինչպիսիք են առցանց թեստերը, ուսուցողական վիդեո-աուդիոնյութերը, տարբեր տեխնիկական ծրագրերով պատրաստված տեղեկատվական շնորհանդեսները, ուսումնական բլոգները, ֆորումները և այլն:

Ա/ Անգլերենի դասերի համար օգտագործվող գրականություն

Դասընթացներն անցկացվում են անգլերենի ուսուցման համար միջազգային լայն տարածում ունեցող տարբեր գրքերի և ռեսուրսների համակցմամբ, սակայն հիմնական օգտագործվող դասագրքերը ներկայացված են ստորև.

- "Destination" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "Interchange" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "Headway" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "New English File" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով),
- "English Grammar in Practice" (1-ին տարվա մեջ սկսնակների մակարդակի դասագրքով, 2-րդ տարվա համար միջին մակարդակի դասագրքով):

Ի լրումն դասերի ժամանակ օգտագործվող այս դասագրքերի, երեխաներին նաև տրամադրվում է գրականություն՝ տնային ընթերցանության համար: Այդ գրքերի ցանկն անընդհատ փոփոխվում և թարմացվում է, սակայն որոշ դասական հեղինակների գրքեր սովորաբար ներառվում են ամեն տարի մասնակիցներին տրամադրվող գրքերի շարքում, օր.

#	Հեղինակ	Գրքի վերնագիր
1	O. Henry	The Last Leaf and Other Stories
2	Herman Melville	Billy Budd
3	Henry James	Washington Square

4	W. Somerset Maugham	The Escape and Other Stories
5	F. Scott Fitzgerald	The Cut-Glass Bowl and Other Stories
6	W. Somerset Maugham	The Creative Impulse and Other Stories
7	Herman Melville	Moby Dick
8	Thomas Hardy	The Woodlanders
9	D.H. Lawrence and others	British and American short stories
10	Wilkie Collins	The Woman in White
11	Maya Angelou	I Know Why the Caged Bird Sings
12	Emily Bronte	Wuthering Heights
13	Jane Austen	Sense and Sensibility
14	Jane Austen	Emma
15	Jack London	The Call of the Wild
17	John Steinbeck	The Pearl

Բ/ Մասնակիցների անձնային զարգացմանն ուղղված միջոցառումների հակիրճ նկարագրություն

Ի լրումն անգլերենի դասերի, մասնակիցների համար կազմակերպվում են նաև նրանց անձնային աճին նպաստող տարբեր ենթածրագրեր և միջոցառումներ, օրինակ՝

1. Բազային ինտերնետ-համակարգչային հմտությունների ուսուցանում՝ 20 ժամ ծրագրի սկզբում,
2. Հանդիպումներ և քննարկումներ տարբեր ոլորտների մասնագետների և վերապատրաստողների հետ: Քննարկումների և վերապատրաստումների թեմաները ներառում, բայց չեն սահմանափակվում հետևյալով. երեխաների իրավունքներ և պարտականություններ, ծանոթություն առաջնորդության տարբեր տեսությունների, բանավեճի հմտություններ, արդյունավետ հաղորդակցման հմտություններ, շրջակա միջավայրի պաշտպանություն, հետաքրքիր տեղեկությունների այլ մշակույթների մասին և այլն,
3. Ամառային ճամբարներ, որոնք տևում են մինչև 4 օր: Դրանցից մի քանի օրը կազմակերպվում են հենց շահառու համայնքներում, մի քանի օր էլ միասնական որևէ վայրում (օր. նախորդ տարիներին կազմակերպվել են Աղվերանում կամ Ծաղկաձորում): Ճամբարների ընթացքում կազմակերպվող հետևյալ բնույթի տարատեսակ միջոցառումների ժամանակ մասնակիցները.
   - Ծանոթանում են Web 2.0 տարբեր ռեսուրսների, որոնց կարող են անվճար հիմունքներով անդամագրվել և մասնակցել անգլերեն լեզվով տարբեր

ուսումնական կամ անձնական աճին նպաստող վեբինարների ու առցանց դասընթացների,

- Հանդիպում և զրուցում են իրենց ոլորտում հաջողության հասած տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների հետ, այցելում են տարբեր կրթական հաստատություններ (օր. Դիլիջանի UWC քոլեջ, Հայաստանի Ամերիկյան համալսարան, Թումո ՏՀՏ կենտրոն), որն օգնում է նրանց կողմնորոշվել իրենց մասնագիտության ընտրության հարցում,
- Հանդիպում են տարբեր միջազգային ծրագրերի շրջանավարտների հետ և նրանցից ստանում են խորհրդատվություն այդ ծրագրերին դիմելու պահանջների և համապատասխան քննություններին ճիշտ պատրաստվելու մասին,
- Թիմային փոքրիկ հետազոտություններ են անցկացնում հանձնարարված կամ իրենց կողմից ընտրված տարբեր թեմաներով (օր., տարբեր երկրների կրթական կամ ընտրական համակարգերի մասին, աշխարհին հուզող բնապահպանական հարցերի մասին, հայտնի մարդկանց հետ կապված հետաքրքիր դեպքերի մասին և այլն),
- Սովորում են, թե ինչպես գրել և իրականացնել դրամաշնորհային ծրագրեր,
- Ծանոթանում են Հայաստանում ապրող ու աշխատող անգլախոս հյուրերի հետ և նրանցից հետաքրքիր տեղեկություններ են ստանում իրենց երկրների պատմության, մշակույթի, ավանդույթների մասին,
- Մասնակցում են հռետորական արվեստի և արդյունավետ բանավեճի վերաբերյալ դասախոսությունների,
- Մասնակցում են տարբեր գրական, երաժշտական և սպորտային խաղերի: